ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ***Գրական ունկնդրման դասերը տարրական դասարաններում***

Հետազոտող՝ Անահիտ Թաթիկյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Գրական ունկնդրման դերը, նպատակներն ու խնդիրները
3. Գրական ունկնդրման դասերի արդիականությունը դպրոցում, դասավանդման մեթոդիկան
4. Գրական ունկնդրման դասերի պլանավորման առանձնահատկությունները
5. Գրական ունկնդրման ժամերին ներկայացվող պահանջները
6. Երեխայի արժեհամակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքները գրական ունկնդրման ժամերին
7. Գրական ունկնդրման ժամերը որպես ուսումնական , դաստիարակչական խնդիրների լուծման միջոց
8. Խաղը որպես գրական ունկնդրման դասաժամերի բաղկացուցիչ մաս
9. Վերլուծություն
10. Եզրակացություն
11. Օգտագործված գրականության ցանկ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր վեց տարեկան երեխան արդեն տիրապետում է համակարգչային տարրական գիտելիքների: Աշխարհին նա հաղորդակցվում է նաև համացանցի միջոցով: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը, և անհնար է այլևս մեր առօրյան պատկերացնել առանց դրանց: Սա կյանքի առաջընթացն է: Սակայն առկա է նաև տվյալ երևույթի բացասական կողմը. երկրորդ պլան է մղվել գիրքը, նվազել է գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Պետք է նկատել, որ վեց տարեկան և դրանից ցածր տարիք ունեցողները գրականությանը հաղորդակցվելու առավել շատ փորձ ունեն (հեքիաթ, ոտանավոր), քանի որ մեծահասակները նախադպրոցական տարիքից երեխաների համար շատ են կարդում հեքիաթներ և սովորեցնում ոտանավորներ: Երեխայի հետաքրքրությունը չի թուլանում նաև դպրոց հաճախելու առաջին տարիներին: Գարդները «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում» գրքում նշում է, որ մարդիկ ի ծնե օժտված են: Նրանց հատուկ են ընկալման և մտածողության բոլոր ձևերը: Սակայն տարբեր մարդկանց մեջ դրանցից մեկը կամ մի քանիսը դրսևորվում են առավել ընդգծված: Մտածողության այս տեսակների վրա հենվելն ուսուցումը դարձնում է առավել արդյունավետ: Բանն այն է, որ ոչ թե աշակերտն է հարմարվում ուսուցման այս կամ այն ձևին, այլ ուսուցման ձևն է հարմարեցվում աշակերտի ընկալմանը: Ժամանակն առաջ է շարժվում: Թե տանը, թե դպրոցում փոխվում է ամեն բան. փոփոխվում են նաև ուսուցման ու դաստիարակության խնդիրները: Ժամանակակից երեխաների մտածողությունը, ցանկություններն ու հետաքրքրությունները չեն համապատասխանում անցյալ ժամանակով ապրող մանկավարժին: Հետևաբար, նրա կողմից գործադրվող ուսուցման մեթոդներն արգասաբեր չեն լինի: Այսօր մենք խնդիր ունենք, որ գիտակցաբար քայլի արդիականության հետ, առաջնորդվի ժամանակի պահանջներով: Երեխաներին պետք է ուսուցանել առանց հարկադրանքի և ճնշումի, քանի որ ուսուցման այդ ուղին երեխաների մոտ առաջ է բերում հիասթափություն և անտարբերություն: Հարկավոր է դպրոցը դարձնել մանուկների աշխատելու և սովորելու համար առավել հաճելի և նպաստավոր վայր: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական բարձր արժանիքներ: Նա պետք է տիրապետի սովորելու և սովորեցնելու ժամանակակից

մեթոդներին, զբաղվի ինքնակրթությամբ և լինի բազմակողմանի զարգացած անձնավորություն:

2. ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ավանդական մեթոդներով դասավանդումը չի կարող բավարարել քսանմեկերորդ դարի սերնդի աճող հետաքրքրություններին: Երեխայի ուսուցումը պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ, պայծառ, հստակ ու մատչելի: Գերմանացի մեծ քնարերգու Գյոթեն ասել է. «Մարդը չի կարող յուրացնել այն, ինչ չի հասկանում»: ՈՒսուցչի խնդիրն է՝ հենց նախապայբբենական շրջանից աշակերտի մեջ հետաքրքրություն սերմանել գրքի և ընթերցանության հանդեպ: Գրական ունկնդրման ժամերին հարկավոր է առաջին հերթին ուշադրություն դարձնել լեզվի ճիշտ ու գրագետ գործածությանը: Հեքիաթները, բանաստեղծությունները, փոքրիկ պատումները հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում մայրենիի ժամերը: Երեխաները հաճույքով են ընդգրկվում բեմականացումների նախապատրաստական գործընթացի մեջ, սիրով ստանձնում են իրենց հանձնարարված դերը: Ոչ թե աշակերտն է հարմարվում այս կամ այն ձևին, այլ ուսուցման ձևն է հարմարեցվում աշակերտի ընկալմանը: Հեքիաթները նպաստում են տարբերակելու աշխատասիրությունը՝ ծուլությունից, ակտիվ գործունեությունն՝ անգործությունից, բարությունը՝ չարությունից, հոգատարությունն՝ անտարբերությունից և այլն: Հեքիաթը միաժամանակ օժանդակում է երեխաների մտավոր զարգացմանը և նրանց դաստիարակում թերությունների նկատմամբ անհաշտության ոգով:

3. ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու ունակության ձևավորումը: Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է ոչ միայն ճիշտ, տեղին, հետաքրքիր ու դիպուկ արտահայտվել, այլև լսել խոսակցին, ունկնդրել, ընկալել, հասկանալ այն, ինչ ասվում է, այսինքն՝ դառնալ ակտիվ ունկնդիրներ: Աշակերտներին անհրաժեշտ է այսօր սովորեցնել նաև լսելիս

ուշադիր և ակտիվ լինել, այսինքն՝ իրապես լսել զրուցակցին և պատասխան խոսքը կառուցել նրա ասածի հիմքով։

Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը գիրքը փոխանցում է աշակերտներին։ Նրանք ուսումնասիրում են, թերթում, դիտում կազմը, նկարազարդումները։ Դասի ավարտին ուսուցիչը հանձնարարում է մտապահել ստեղծագործության վերնագիրը, անձնական գրադարանում փնտրել, գտնել և դպրոց բերել նմանատիպ այլ գրքեր։ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ ենթադրում է սովորողի կողմից մի շարք հիմնական կարողությունների զարգացում։

1. Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը։
2. Վեր հանել անհրաժեշտ տեղեկատվությունը։
3. Ամբողջապես ըմբռնել ունկնդրվող բնագրի մանրամասները։

ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ունակություններին վերաբերող պահանջները փոխվում են դասարանից դասարան՝ ըստ լեզվական նյութի բարդացման և ընկալման պահանջների։ Ակտիվ ունկնդրման կարողությունների զարգացումը կհանգեցնի մի քանի խնդրի լուծման։ Դրանք են.

ա. ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ վերածել խոսքային գործունեության անհրաժեշտ բաղադրամասի և երկկողմանի գործընթացի (ունկնդրման համար կարևոր են դիմախաղը, շարժումները և կեցվածքը)։

բ. ՈՒՆԿՆԴՐՄԱՆ նպատակի բացահայտումը /ունկնդրման ակտիվության ապահովումը, այսինքն՝ ըմբռնումով ունկնդրումը /։

գ. Հասկանալ ունկնդրված տեքստը (որոշել թեման և տեքստի հիմնական գաղափարը)։

դ. ՈՒՆԿՆԴՐԵԼԻՍ ազատ լինել հարցեր առաջադրելու՝ լավ չհասկացածի կամ չընկալածի շուրջ։ա

ե, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ դարձնել խոսքի ընդհանուր բովանդակությանը և ոչ խոսքային միջոցներին (ձայնի հնչերանգը, տեմպը, բարձրությունը, դիմախաղը, շարժումները, կեցվածքը)։

զ, Ստուգել բանավոր խոսքն ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները։

Գրական ունկնդրման նպատակը սովորողներին գրական տեքստի ընկալմանը վարժեցնելն է։ Դա վերաբերում է գեղարվեստական ընկալմանը, որին մասնակցում են հոգեբանական մի շարք գործընթացներ՝ խոսք, երևակայություն, մտածողություն։ Գեղարվեստական ընկալումը ոչ միայն ստեղծագործությունը լսելու կարողությունն է, այլև ենթատեքստը, գործող անձանց փոխհարաբերությունները հասկանալու կարողությունը։ Դպրոցականի համար գրքի հետ նման շփումը դառնում է բարոյականության և բարեկրթության ձևավորման նախապայմաններից մեկը։ Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումն սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում է փուլ առ փուլ.

1-ին փուլ (նախապատրաստական). առաջին դասարան, երբ աշակերտը նոր է գրաճանաչ դառնում։

2-րդ փուլ (հիմնական). 2 – 4-րդ դասարաններ

Առաջին փուլում անհրաժեշտ է առաջին դասարանցիների մեջ արթնացնել ամեն օր, յուրաքանչյուր ազատ ժամ գիրք, թերթ կարդալու ցանկություն և ձգտում։

Առաջին դասարանում գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է հաշվի առնել՝

1. սովորողների պատրաստվածության մակարդակը,

2. միջավայրի առանձնահատկությունները (ծնողների սոցիալական վիճակը, մշակույթի օջախները, դասարանի և դպրոցի գրական ֆոնդը),

3. երեխաների հետաքրքրությունների շրջանակը։

Գրական ունկնդրման դասերին աշակերտները լինում են պասիվ և ակտիվ ունկնդրի դերում։ Պասիվ ունկնդրման ժամանակ ակտիվ ընթերցանության ձևավորումը հետաձգվում է։ Ի՞նչ պետք է անել, որպեսզի չբախվենք նման դժվարությունների։

4. ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրական ունկնդրման դասերը պլանավորելիս պետք է նկատի առնել աշխատանքի հետևյալ տեսակները.

1. Խոսքային վարժություններ. դասը սկսել 2 – 3 րոպե տևողությամբ խոսքային վարժություններով, քանի որ դասամիջոցից հետո աշակերտները դժվարությամբ են անցում կատարում ուսումնական գործունեության: Խոսքային վարժությունները աշակերտներին ներգրավում են ակտիվ մտավոր աշխատանքի մեջ: Խոսքային վարժությունների համար շատ հարմար են շուտասելուկները, հանելուկները, բանաստեղծությունները, ոչ ծավալուն հետաքրքրաշարժ տեքստերը: Խոսքային վարժույունների տեքստերն ընտրվում են այնպես, որ դրանք հնարավորություն ընձեռեն ակտիվացնելու երեխաների կենսափորձը (մանկական զվարճալիքներ, հեքիաթների բեմականացումներ): Տեքստի բովանդակության հետ դրանք պետք է լինեն փոխկապակցված:

2. Ծանոթություն նոր նյութին: Յուրաքանչյուր գրական ունկնդրման դասի ընթացքում աշակերտները ծանոթանում են նոր ստեղծագործության: ՈՒսուցիչը նյութը պետք է ներկայացնի հնարավորինս արտահայտիչ:

3. Գրական ստեղծագործության ընկալման գործընթացը: Երեխայի համար առավել հեշտ է յուրացնել և ընկալել այնպիսի դրվագներ, որոնք իրեն ծանոթ են և իր համար ուշագրավ: Մինչդեռ նա դժվարությամբ է ընկալում նոր ներկայացվող ստեղծագործության հերոսի գործողությունները, դրանց դրդապատճառները: Այս դեպքում ուսուցչի խնդիրն է՝ աշակերտներին ճիշտ և հստակ ուղղորդել դեպի անծանոթ իրավիճակներ, որպեսզի նրանք կարողանան ներթափանցել տվյալ հերոսի ներաշխարհը, ընկալել նրա վարքագծի դրդապատճառները:

4. Ստեղծագործության բովանդակության ընկալմանը միտված աշխատանքներ:

Ստեղծագործության բովանդակության ընկալմանն ուղղված աշխատանքը պետք է անցկացնել միմիայն երեխաների սկզբնական ընկալումից հետո: Աշակերտներն ուսուցչի օգնությամբ կազմում են ստեղծագործությունը վերարտադրելու պլան-սխեմա՝ պահպանելով գործողությունների զարգացման ընթացքը:

Ստեղծագործության բովանդակության վերարտադրումը դժվար տրվող հմտություններից է, քանի որ այն իր մեջ ներառում է բովանդակային ընկալում, մտքերի արտահայտում և բնագրին համապատասխան բառերի կիրառում: Ստորև առանձնացնում ենք մի քանի միջոց, որոնք աշակերտին կօգնեն ճիշտ և մատչելի վերարտադրել տեքստը: Որպեսզի հեղինակի կողմից օգտագործված բառերը ամրակայվեն նրա հիշողության մեջ և օգտագործվեն բանավոր խոսքում, կարելի է կատարել հետևյալ աշխատանքները.

ա. Անհասկանալի բառերի բացատրություն, բառերի ճիշտ արտասանություն:

բ. ՈՒնկնդրած ստեղծագործության այն բառերի արտասանությունը, որոնք մնացել են հիշողության մեջ կամ երեխաներին դուր են եկել:

գ. Ստեղծագործության նորածանոթ բառերով բնութագրել կամ նկարագրել հերոսներին (ինչպիսին են նրանք պատկերացնում հերոսների արտաքինը, ինչպես են նրանք խոսում):

դ. Երկխոսությունների միջոցով, դերային խաղով, մնջախաղով ներկայացնել ստեղծագործությունը:

5. Դասի ամփոփումը կատարվում է տարբեր եղանակներով. օրինակ՝ ստեղծել փոքրիկ գրադարան, կատարել նկարազարդումներ, վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը, հաջորդաբար ներկայացնել գործողությունները և հերոսներին դերային փոքրիկ խաղերի միջոցով:

5. ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԺԱՄԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գրական ունկնդրման ժամերի համար մայրենիի ուսումնական ծրագիրը ներկայացնում է հետևյալ պահանջները.

- ՈՒնկնդրել և ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրել հեքիաներ, պատմվածքներ, բանաստեղծություններ:
- Կարծիքներ և տպավորություններ փոխանակել ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ:

- Հետևել գրական ստեղծագործության դեպքերի զարգացմանը, հերոսների հարաբերություններին և դրանք վերարտադրել նույնությամբ կամ ստեղծագործաբար։
- Պատմել՝ ըստ հիշողության կամ նկարի։
- Ստեղծել դասարանական գրադարան։
- Բեմականացնել ստեղծագործություններ և մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը։
- Շարադրել մաղթանքներ, նամակներ, խոսքի մեջ օգտագործել բանահյուսական մատչելի ասույթներ։
- Ընթերցել հումորային ստեղծագործություններ, վկայակոչել զվարճալի դեպքեր սեփական կյանքից։
- Նկարել ունկնդրած ստեղծագործության թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել կատարած աշխատանքները։

Ծրագրի «Գրական ունկնդրում» բաղադրիչն ունի հետևյալ նպատակները. խոսքի զարգացում, ակտիվ բառապաշարի հարստացում, արտասանական ունակությունների զարգացում, լսելու, ունկնդրելու, մտապահելու, վերարտադրելու կարողությունների մշակում, հաղորդակցական կարողությունների ձևավորում, միտք ձևակերպելու կարողությունների մշակում, աշխարհաճանաչողական գիտելիքների ընդլայնում, հերոսների զգայական վիճակը գնահատելու կարողության մշակում, սեփական կարծիք հայտնելու ունակության ձևավորում, մարդկանց, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում։ Այս բոլոր պահանջներն իրականացվում են խաղ-ուսուցում եղանակով։

Գրական ունկնդրումը կապող օղակ է դասամիջոցի խաղային գործունեությունից ուսումնական գործունեության անցնելու համար։ Այսպիսի աշխատանքի համար հարուստ նյութ են ծառայում հանելուկներն ու շուտասելուկները, կարճ հետաքրքիր տեքստերը։ Գրական ունկնդրման դասերին ակտիվ մասնակցությունը նպաստում է երեխաների ուշադրության կենտրոնացմանը։ Խոսքային վարժություններն ընտրվում են խնամքով, նպատակային։ Ցուցադրվում են նաև դիդակտիկ նյութեր՝ փոխկապակցված այն տեքստի բովանդակության հետ, որն ունկնդրելու են տվյալ դասին։ Պետք է նշել, որ հիմնականում ընթերցողից է կախված, թե ինչպես կընթանա

տեքստի ընկալման գործընթացը, և ինչպես կարձագանքեն երեխաները տեքստն ունկնդրելիս։ Յուրաքանչյուր գրական ունկնդրման դասաժամի ընթացքում երեխաները ծանոթանում են նոր ստեղծագործության, և ամբողջ աշխատանքն անցկացվում է միայն երեխաների սկզբնական ընկալումից հետո։ Հիմնական դժվարությունն այն է, որ տարբեր երեխաներ ունեն ընկալելու տարբեր եղանակներ ու ոճեր։ Տեսողական ընկալումով և հիշողությամբ սովորողներն երկար լսելիս ձանձրանում են։ Իսկ այն երեխաները, որոնց ինքնագնահատականը ցածր է, սկսում են տագնապել, որ երբեք չեն կարող կարդալ այնպես, ինչպես ընթերցում է ուսուցիչը։ Երեխաներն ունեն մի շատ կարևոր առանձնահատկություն։ Նրանք ամենից առաջ սիրում և մտապահում են այն, ինչն առօրյա կյանքում այս կամ այն կերպ իրենց ծանոթ է, բայց ունկնդրման ընթացքում իրենց համար բացահայտում են հետաքրքիր մանրամասներ և նորովի են ընկալում ծանոթ նյութը։ Նրանք շատ լավ են պատկերացնում հերոսի գործողությունները, նրա արարքների և ստեղծված իրավիճակի միջև առկա կապերը։ Եթե ուսուցիչը նրբանկատորեն ուղղորդի երեխաների ուշադրությունն այդ խնդիրների վրա, ապա նրանք ունակ կլինեն ընկալելու հերոսի վարքագծի դրդապատճառները և կարող են թափանցել նրա ներաշխարհը։ Լուրջ ուշադրություն պետք է դարձնել երեխաների տարիքային առանձնահատկություններին։ Հույն մեծ փիլիսոփա Արիստոտելն ասել է «Խոսիր, որ քեզ տեսնեմ»։ Ուսուցչի օգնությամբ երեխան կարողանում է խոսել, քննարկել ունկնդրածը, խորհրդածել այդ ուղղությամբ, համապատասխանեցնել տարբեր առարկաներ և մասեր, որոշել գործողությունների հերթականությունը։ Այս ուղղությամբ տարվող աշխատանքները երեխաների համար ձանձրալի չեն լինի, եթե համեմվեն շուտասելուկներով, երգերով, հանելուկներով, փոքրիկ բանաստեղծություններով, բեմականացումներով։ Մեր գլխավոր նպատակն է՝ դաստիարակել ազնիվ, հայրենասեր, նպատակասլաց, բարի, հոգատար, գիտակից և զարգացած քաղաքացիներ։ Դա իրականացնելու համար քայլ առ քայլ մոտենում ենք մեր առջև դրված նպատակներին։ Ջանում ենք՝ թե անձնական օրինակով, թե գրական հերոսների միջոցով, թե սովորողների ծնողների, ընկերների, տատիկ-պապիկների կենսափորձին դիմելով, դաստիարակել երեխաներին և ձևավորել մի արժեհամակարգ, որի կրողները հետագայում կկայանան որպես հայրենասեր, ուժեղ, բանիմաց և պայքարող անհատներ։

6. ԵՐԵԽԱՅԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԺԱՄԵՐԻՆ

- ***Երեխաների ապրումները*** սկսում են «իմաստ» ստանալ (զայրացած երեխան հասկանում է, որ ինքը զայրացած է), և դրա շնորհիվ սեփական անձի հանդեպ առաջանում է այնպիսի նոր վերաբերմունք, ինչը բացակայել էր մինչ այդ։ Երեխան սկսում է իրեն անհատ զգալ՝ առանձին միավոր։ Հետևաբար անհրաժեշտ է հնարավորինս աջակցել նրա կայացմանը՝ որպես անհատ։ Այդ առումով՝ գրական ունկնդրման դասաժամի կառուցվածքային բազմազանությունը ուսուցչին հնարավորություն է տալիս՝ երեխային դիտարկել բազմակողմանիորեն.
- ***Երեխայի բնավորության առանձնահատկությունները.*** ուսումնական գործունեության նկատմամբ նրա վերաբերմունքը՝ ջանասիրություն, երգեր կամ փոքրիկ բանաստեղծություններ սովորելու նրա ցանկությունն ու ունակությունը, հաշվելու, նկարելու պարզ առաջադրանքներ կատարելու կարողությունները։
- ***Երեխայի հետաքրքրությունների շրջանակը.*** ինչո՞վ է սիրում զբաղվել, ինչպե՞ս է անցկացնում ազատ ժամանակը, ի՞նչ մուլտֆիլմեր է սիրում դիտել, ի՞նչ ստեղծագործություններ է ունկնդրում, ի՞նչ թեմաների շուրջ է սիրում զրուցել, ի՞նչ բնույթի հարցեր է տալիս։
- ***Միջանձնային հարաբերությունները.*** Զգայուն է մարդկանց նկատմամբ, ինչպե՞ս է իրեն պահում տարեկիցների և մեծերի հետ հաղորդակցվելիս, համագործակցու՞մ է նրանց հետ, հանդուրժում-ապրումակցու՞մ է նրանց։
- ***Գեղագիտական կարողություններն ու հետաքրքրությունները.*** Ինչպե՞ս է վերաբերվում երաժշտությանը, նկարելուն, ինչպիսի՞ հախադրյալներ ունի, կարո՞ղ է պատմել տեսածի մասին, ուշադի՞ր է բնության երևույթների, ձայների նկատմամբ։
- ***Աշխատանքային կարողությունները.*** Տնային գործերում երեխան ունի՞ պարտականություններ, սիրո՞վ է կատարում իրեն տրված հանձնարարությունը, սիրու՞մ է մասնակցել դպրոցական աշխատանքներին։ Տարրական դպրոցն ավարտող յուրաքանչյուր շրջանավարտ պետք է կարողանա կարդալ և հասկանալ գրավոր խոսքը, հաղորդակցվել գրական հայերենով, արձագանքել և ըմբռնել ուրիշների խոսքը, ձևակերպել և ներկայացնել սեփական մտքերը։ Ընթերցողական կարողությունը հիանալի հնարավորություն է ստեղծում՝ մարդկանց, շրջապատող

երևույթներն ու առարկաները ճիշտ տեսնելու, լսելու և ընկալելու համար: Այն կարևոր ազդեցություն ունի անձի համակողմանի ձևավորման և զարգացման գործընթացում: Կարդալ ուսուցանելիս հեշտ է գնահատել սովորողների առաջընթացը, նկատել նրանց ձեռքբերումները, միջոցներ գտնել տվյալ բնագավառում հանդիպող դժվարությունները հաղթահարելու համար:

7.ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԺԱՄԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑ

Գաղտնիք չէ, որ լավ ընթերցող դառնալու գրավականը շատ կարդալն է: Այդ մշակույթը մի տեսակ հետ է մնացել մեր առօրյայում և իր տեղը զիջել է տեղեկատվական ժամանակակից միջոցներին: Երեխաներն այսօր գերադասում են 1 ժամ կամ ավելի զբաղվել համակարգչային խաղերով, քան 30 րոպե ընթերցել որևէ գրական ստեղծագործություն: Երեխային պետք է վարժեցնել և մտերմացնել գրքին: Այս իմաստով նույնպես կարևորագույն խնդիր է լուծում գրական ունկնդրման դասաժամի արդյունավետ կազմակերպումը: Տեխնոլոգիական նվաճումներին զուգընթաց՝ գիրքը կարող է դառնալ երեխայի լավագույն բարեկամն ու ընկերը և գիտելիքների զարմանահրաշ աշխարհ բացել նրա առջև: Այս դասաժամի ճիշտ կազմակերպումը լուծումներ է առաջարկում մի շարք ուսումնական և դաստիարակչական խնդիրների համար.

1. Ձևավորվում են՝

- ուշադրությունը կենտրոնացնելու, դասի անմիջական մասնակիցը լինելու կարողություններ,
- հնչած հարցին ճիշտ պատասխանելու, սեփական կարծիքն ու տեսակետն արտահայտելու հմտություններ,
- ուրիշներին ապրումակցելու պատրաստակամություն,
- սեփական վերաբերմունքն արտահայտելու, գնահատելու, արժևորելու մշակույթ,
- հերոսների վարքագծի դրդապատճառներն ընկալելու, նրանց ներաշխարհը թափանցելու կարողություններ,

- կարդալու կարողություն՝ ապահովելով դրա հետագա զարգացումը։

2. Երեխաները սովորում են՝

- նոր բառեր, արտահայտություններ, մտքեր, որոնք նույնությամբ ներմուծվում են նրանց բառապաշարի և ակտիվ խոսքի մեջ։

3. Իրագործվում է՝

- երեխաների համակողմանի դաստիարակությունը (ընկերասիրություն, հոգատարություն, լավատեսություն և այլն)։

Այս ամենը նպաստում է, որ երեխան ազատ, անկաշկանդ արտահայտի իր մտքերը, և ուսումնական գործունեության մեջ առաջընթաց ապահովվի։ Գրական ունկնդրումն այդ հարցի լավագույն միջոցն է, քանի որ այդ նպատակով ընտրված ստեղծագործությունները կրտսեր դպրոցականներին մղում են ինքնաարտահայտման, անկաշկանդության, նրանց ներշնչում են հանդուրժողականություն, սեր և հարգանք՝ գրական հերոսների և շրջապատի մարդկանց հանդեպ, և ստեղծվում է սովորելու համար բարենպաստ մթնոլորտ։ ՈՒսումնառության ընթացքում երեխաներին օժանդակողներն առաջին հերթին ծնողներն են, պապիկ-տատիկները, դպրոցի նախկին սաները, որոնց օգնությամբ ուսուցիչն ավելի հետաքրքիր է դարձնում դասը։ Փոքրիկները մեծ հաճույքով են դիտում ավագ ընկերների ներկայացրած բեմականացումները, ուրախանում են, երբ իրենց հյուր են գալիս գալիս ծնողները կամ թատրոնի դերասաններից որևէ մեկը։ Նրանց դուր է գալիս մեծահասակների սահուն ընթերցանությունը, և իրենք ևս ուզում են անպայման նմանվել ուսուցչին, ավագ ընկերներին, ծնողներին։ Երեխաներն զգում են, որ իրենք շրջապատված են ուշադրությամբ։

8. ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Երեխաների կյանքում առաջնայինը խաղային գործունեությունն է։ Ուստի խաղը որպես բաղկացուցիչ մաս է կազմում գրական ունկնդրման դասաժամերին։ Երբ խաղը մտնում է մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է աշխույժ մթնոլորտ։ Այդ կերպ ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ խոչընդոտներն

աննկատելիորեն անհետանում են։ Երեխաներն անկաշկանդ արտահայտում են զգացածն ու մտածածը։ Անընդհատ կրկնվող և միակերպ խաղերն ու խաղային հնարները նույնպես կարող են ձանձրացնել երեխային, ուստի անհրաժեշտ է դրանք կիրառել ստեղծագործաբար։ Խաղային պայմաններում աշակերտները հեշտությամբ են ներգրավվում ուսումնական գործունեության մեջ։ Խաղն ուսումնական գործընթացում լուծում է և կրթական, և դաստիարակչական խնդիրներ։ Սովորողները ձեռք են բերում միմյանց լսելու և համագործակցելու կարողություն։ Այսպիսով, նրանք գիտակցում են, որ մայրենի լեզվի իմացությունն անհրաժեշտ է ոչ միայն ծրագրային թեմաները յուրացնելու, բարձր գնահատական ստանալու կամ ուսուցչի խրախուսանքին արժանանալու, այլև կարդացածը և ունկնդրածը լիարժեք վերարտադրելու, հարազատներին, բարեկամներին, ընկերներին պատմելու, պատշաճ ձևով միմյանց հետ զրուցելու, օգտակար խորհուրդներ ստանալու և փոխանցելու համար։ Այսինքն գրական ունկնդրման ժամերի լիարժեք կազմակերպումը միջոց է՝ երեխաներին շրջապատի հետ արդյունավետ, հետաքրքիր, անկաշկանդ հաղորդակցվել սովորեցնելու համար։ Ստորև ներկայացնում ենք առաջին դասարանում պարապած գրական ունկնդրման դասի նմուշօրինակ։

Դասի տիպը - նոր նյութի հաղորդում.

Դասի թեման – «Հեքիաթ ձայնավոր ու բաղաձայն հնչյունների մասին» (ըստ Ա.Գևորգյանի).

Դասի նպատակը - Սովորողը պետք է իմանա հնչյունների տեսակները, դրանց կազմությունը, նորածանոթ բառերի բացատրությունը։

Սովորողը պետք է կարողանա ունկնդրել հաղորդվող բնագիրը, կազմել բառեր,հասկանալ լսածի բովանդակությունը, բնութագրել-նկարագրել հերոսին, վերարտադրել տեքստի բովանդակությունը, արտահայտել կարծիք, վեր հանել ստեղծագործության հիմնական գաղափարը։ Ձևավորել արժեհամակարգ, ինչը հենվում է սիրո, ընկերության, համերաշխության, հանդուրժողականության և այլ գաղափարների վրա։

Դասի խնդիրները՝ զարգացնել սովորողների բանավոր խոսքը, լսելու, մտածելու կարողությունը, հարստացնել բառապաշարը, ձևավորել ընկերություն, ուշադրություն, համագործակցելու հմտություն և կարողություն։

Դասի կահավորումը՝ պաստառներ, ձայնարկիչ, սկավառակ, կապույտ և կարմիր քառակուսի քարտեր, գաղտնիքների արկղ

Դասի ընթացքը՝

Գրատախտակին փակցված են համապատասխան ստեղծագործության հատվածների մեծադիր պատկերներ։ Կռահման մեթոդով բացահայտվում է թեմայի բովանդակությունը։

- Երեխաներ, ի՞նչ եք հասկանում ընկերություն ասելով։

Սովորողները, ուսուցչի հրահանգով, արագ արձագանքում են տեղերից՝ ինքնաբերաբար ասելով հասկացություններ, ինչն իրենց ընկալմամբ, համարժեք է կամ առնչվում է ընկերությանը։ Ուսուցիչը գրատախտակին կառուցում է խմբավորման համապատասխան գծապատկերը։

Վստահություն ճշտախոսություն

Ընկերություն

Ազնվություն Օգնություն Համերաշխություն

Հանձնարարվում է նաև հիշել ընկերության մասին մի պատմություն՝ դիտած Մուլտֆիլմերից՝ օգտագործելով գրատախտակին գրված բառերը։ Մեկ-երկու աշակերտ ներկայացնում են իրենց հորինած պատմությունը։ Ուսուցիչը դիմում է դասարանին.

- Հիմա տեսնենք, թե ինչպիսի կռահումներ եք կատարել։

Հնչում է ստեղծագործության ձայնագրությունը, այնուհետև նույնը կարդում է ուսուցիչը։ Անդրադարձի ձևով առաջադրվում են հարցեր, որոնց հաջորդում են ունկնդիրների պատասխանները։

-Ինչե՞րն էին ապրում անտառում։

-Հնչյունները։

-Որտե՞ղ էր նրանց տնակը։

-Նրանց տնակը գեղատեսիլ անտառակում էր։

-Ի՞նչը փոխվեց նրանց կյանքը։

-Կյանքը փոխվեց, երկինքը մռայլվեց, քանի որ լեռներից փչեցին սառը քամիները։

-Հնչյունները վախեցա՞ն։

-Այո, միայն վեց հնչյուն չվախեցան և պահպանեցին իրենց ձայնը, իսկ մյուսները վախից կորցրին իրենց ձայնը։ Իրենց ձայնը պահպանող հնչյունները կոչվեցին ձայնավորներ, իսկ մյուսները կոչվեցին բաղաձայն հնչյուններ։

-Ինչպիսի՞ն էին ձայնավոր հնչյունները։

-Ընկերասեր, հոգատար, ուշադիր, միմյանց կարեկցող, հարեհաս, համերաշխ…

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում էգրատախտակին։ Դիտում են խմբավորման գծապատկերը և եզրակացնում, որ իրենք ճիշտ են պատկերացրել «ընկերության բանաձևը»։ Կատարվեց նաև բառային աշխատանք (նորածանոթ բառերով կազմել բառակապակցություններ և նախադասություններ)։ Ֆիզկուլտ-դադարը կայացավ «Հնչյուն երգի» կատարմամբ և համապատասխան պարային շարժումներով։ Այնուհետև դասարանը բաժանվում է 5 խմբի։ Յուրաքանչյուր խմբի հանձնարարվում է նկարել հեքիաթը (10-15 րոպե)։ «Ով ավելի շատ» խաղը կազմակերպվեց դոմինոյի սկզբունքով։ Խմբերը, հերթով վերցնելով վանկային քարտերը, կազմում են բառեր։ Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ բառ է կազմում։ Մինչ խմբերն աշխատում են, երեք աշակերտ վերաշարադրում են հեքիաթը։ Ամփոփումը կատարվում է «Շղթայի» մեթոդով։

Հայտարարվում է, որ հաղթում է միասնությունն ու ընկերությունը։ Խմբերը գնահատվում են փոքրիկ նոներով՝ որպես հաղթանակի և կյանքի խորհրդանիշ։

9. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությանը մասնակցել է 32 աշակերտ։



10. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ինչպես տեսանք, տարրական դասարաններում մայրենիի դասընթացի կարևորագույն բաղադրիչ են կազմում գրական ունկնդրման դասաժամերը։ Այս աշխատանքն սկսվում է ուսումնական գործունեության առաջին իսկ շաբաթից։ Գրական ունկնդրման դասաժամերին ուսուցիչը օգնում է երեխաներին՝ ձևավորելու նոր արժեհամակարգ, ինչը հենվում է սիրո, բարության, միմյանց հանդեպ դրսևորվող հոգատարության, հանդուրժողականության, համերաշխության, փոխըմբռնման վրա։

Անձնային որակների զարգացման հետ մեկտեղ արթնանում է կարդալու հանդեպ հետաքրքրությունը: Մշակվում է կարդալու տեխնիկա, ձևավորվում է խոսքի մշակույթ, հարստանում է բառապաշարը, երեխաները ձեռք են բերում դերասանական որոշակի հմտություններ: Ձևավորվում և զարգանում են երևակայությունը, տրամաբանական մտածողությունը, գեղարվեստական ճաշակը և կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Գրքի և ընթերցանության նկատմամբ սովորողների մշտական հետաքրքրության կայացմանը նպաստում է նաև գրական ունկնդրման դասաժամերի ճիշտ, հետաքրքիր և նպատակային կազմակերպումը:

«Ձեռքին լավ գիրք ունեցող մարդը երբեք չի կարող միայնակ լինել…»

Գոլդոն

11. Օգտագործված գրականության ցանկ

1. Կ.Թորոսյան և ուրիշներ, 50 հարց ու պատասխան, Երևան, 2013թ.

2. Գ.Թերզյան, Կ. Թորոսյան, Հ.Խաչատրյան ««Խոսք և հաղորդակցություն», «Զանգակ» , 2014թ.

3. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» Երևան, 2015թ. «Խոսքի զարգացում», «Զանգակ» Երևան, 2014թ.

4. Թ.Թադևոսյան, Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ» 20154-6։

5. Կրտսեր դպրոցականի գրադարան, Գրական ունկնդրում և խոսք Երևան, «Էդիթ Պրինտ» , 2012թ.

6. Գ.Պողոսյան, Ինքնուրույն ընթերցանության ժամերին կիրառվող դիդակտիկ խաղեր, «Նախաշավիղ», 2015-5։

7. Ա.Գալստյան, Ռ.Խարազյան, Լ.Ավագյան, Ա.Բալայան, Գրական ունկնդրում և խոսք, 1-ին դասարան, «Էդիթ Պրինտ», Երևան, 2013թ.

8. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ», 1-2.2009թ. , 1. 2013թ.։